Նախագահներ Բորիս Ելցինի և Նուրսուլթան Նազարբաևի միջնորդական առաքելության արդյունքների համատեղ հուշագիր

/Ոչ պաշտոնական թարգմանություն/

23 սեպտեմբեր, 1991թ., Ժելեզնովոդսկ

Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ լարվածությունը չի մարում չորս տարի՝խլելով տարբեր ազգեր ներկայացնող բազմաթիվ մարդկանց՝ քաղաքացիական անձանց , ներքին զորքերի ու բանակի զինծառայողների կյանքեր: ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները անկարող են եղել արդյունավետ միջոցներ մշակել և ներդնել՝տարածաշրջանում իրավիճակը կայունացնելու համար: Թույլ տրված կոպիտ սխալները Է լ ավելի են խորացրել կողմերի տարաձայնությունները և մեծացրել անվստահությունը Դաշնային մարմինների նկատմամբ:

Հաշվի առնելով այդ իրավիճակը՝միջնորդական ջանքերի անհրաժեշտություն է առաջացել՝ստեղծելու պայմաններ, որոնք հիմք կապահովեն բանակցային գործընթաց սկսելու և տարածաշրջանում իրավիճակը կայունացնելու համար:

Հայաստանի ու Ադրբեջանի համաձայնությամբ, Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի առաջնորդները ստանձնեցին միջնորդական առաքելություն :

1991թ. սեպտեմբերի 20-23-ը Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ. Ելցինի և Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևի գլխավորած միջնորդական առաքելությունը եղավ Բաքվում, Գյանջայում, Ստեփանակերտում և Երևանում: Հակամարտության լուծմանը ձգտող կողմերը ղեկավարվում են ինքնիշխան պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքով՝ անշեղորեն պահպանելով բոլոր քաղաքացիների իրավունքները անկախ նրանց ազգությունից և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

Միջնորդական ջանքերի ընթացքում քննարկվել են հակամարտության փուլային կարգավորման որոշ հարցեր: Քննարկումների հիմնական արդյունքները հետևյալն են.

1.Կողմերը կարծում են, որ հակամարտության կարգավորման անհրաժեշտ և պարտադիր պայմաններն են. հրադադարը, մինչև 1991 թ. Հունվարի 1-ը Ադրբեջանի և Հայաստանի՝ ԼՂԻՄ-ի վերաբերյալ ընդունած հակասահմանադրական բոլոր ակտերի չեղարկումը, իշխանության օրինական մարմինների լիազորությունների ճանաչումը, զինված ստորաբաժանումների դուրսբերումը հակամարտության շրջանից ՝ բացառությամբ ԽՍՀՄ ներքին գործերի և պաշտպանության նախարարությունների ներքին ստորաբաժանումների: Այս ժամկետը լրանալուց հետո զինված բոլոր ստորաբաժանումների ներկայությունը և նրանց գործողությունները ճանաչվում են ապօրինի և կենշվեն ԽՍՀՄ ներքին զորքերի կողմից, իսկ մասնակիցները կենթարկվեն օրենքով նախատեսված պատասխանատվության: Ըստ այդմ, դիտորդների աշխատանքային խմբին հանձնարարվում է մշակել միջոցառումներ՝ հրադադարը պահպանելու , անօրինական ճանաչված բոլորզ զինված կազմավորումները չեզոքացնելու, հակամարտության գոտում ապրող բոլոր քաղաքացիների անվտանգությունը երաշխավորելու համար:

2.Հակամարտության շրջանում իրավիճակի կարգավորմանն ուղղված համակարգված միջոցառումներ իրականացնելու նպատակով կազմվում է դիտորդների ժամանակավոր աշխատանքային խումբ, որի մեջ մտնում են Ռուսաստանի և Ղազախստանի լիազոր ներկայացուցիչները: Աշխատանքային խումբն իր գործունեությունն սկսելու է հոկտեմբերի 1-ից:

3.Ադրբեջանը և Հայաստանը ապահովում են տեղահանված բնակչության փուլ առ փուլ վերադարձը՝ սկսելով ամայի գյուղերից: Կողմերը երաշխավորում են նրա անվտանգությունը մշտական բնակեցման վայրերում: Այդ հարցով բանակցություններն սկսել 1991թ. հոկտեմբերի 1-ից:

4.Հակամարտության մեջ ներգրավված կողմերն անհապաղ ձեռնամուխ են լինում են պատանդների ազատ արձակմանը: Այս գործընթացը պետք է ավարտվի երկու շաբաթում, որը լրանալուց հետո պատանդները պահելուն մեղսակից անձինք պատասխանատվության կենթարկվեն ըստ օրենքի:

Այս կետի իրագործման վերահսկողությունն իրականացնում են միջնորդ կողմերի լիազոր ներկայացուցիչները:

5.Միութենական մարմինների հետ համատեղ կողմերը երկշաբաթյա ժամկետում ապահովում են երկաթուղային տրանսպորտի, օդային հաղորդակցության ու կապի համակարգերի բնականոն աշխատանքը:

Կողմերը միջնորդների մասնակցությամբ բանակցություններ են սկսում ավտոճանապարհների ազատ և փոխշահավետ գործունեությունն ապահովելու համար:

6.Քննարկման ընթացքում կողմերը հանգեցին միածայն համաձայնեցին, որ անհրաժեշտ է ապահովել անաչառ տեղեկատվության հոսքը դեպի հակամարտության գոտի: Որոշվեց ստեղծել տեղեկատվական խումբ՝ Ռուսաստանի և Ղազախստանի ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնք լիազորված են պատրաստել պաշտոնական տեղեկատվություն հակամարտության շրջանի իրադարձությունների մասին:

7.Ադրբեջանի և Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինները հաստատում են լիազոր պատվիրակությունները, որոնք անհապաղ կսկսեն երկկողմ բանակցությունները:

8.Կողմերը կարծում են, որ բանակցությունները կարող են սկսվել, երբ Ռուսաստանի և Ադրբեջանի, Ռուսաստանի և Հայաստանի, Ղազախստանի և Ադրբեջանի, Ղազախստանի և Հայաստանի միջև մշակվեն և կնքվեն երկկողմ պայմանագրեր:

9.Դիտորդների աշխատանքային խմբին հանձնարարված է մեկամսյա ժամկետում առաջարկություններ նախապատրաստել հակամարտության կարգավորման հաջորդ փուլերի համար:

10.Դիտորդների աշխատանքային խումբը չորս հանրապետությունների բարձրաստիճան ղեկավարներին պարբերաբար տեղեկացնելու է ներկա հուշագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի մասին:

Ներկա հուշագրի դրույթները չեն կարող դիտվել որպես ինքնիշխան պետությունների՝ Ադրբեջանի և Հայաստանի ներքին գործերին միջամտություն:

Հուշագիրը ստորագրել են.

Ռուսաստանի կողմից՝ Բ. Ն. Ելցինը,

Ղազախստանի կողմից՝ Ն. Ա. Նազարբաևը,

Ադրբեջանի կողմից՝ Ա. Ն. Մութալիբովը,

Հայաստանի կողմից՝ Լ. Հ. Տեր-Պետրոսյանը:

Հուշագրի քննարկմանը մասնակցել են՝ Ե. Ի. Շապոշնիկովը, Վ. Պ. Բարաննիկովը, Ս. Ոսկանյանը, Մ. Գ. Գյոզալովը, Վ. Դ. Ջաֆարովը, Ռոբերտ Քոչարյանը, Լեոնարդ Պետրոսյանը, Մ. Ռադաևը: